Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 10-Ի ԹԻՎ ԹԻՎ 17-Ա ԵՎ 18-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 17-Ա որոշման բովանդակության մեջ «համաձայն» բառից հետո նշված «հավելվածի» բառը փոխարինել «թիվ թիվ 1-5 հավելվածների» բառերով ու թվերով:

Որոշման հավելվածների վերևի աջ անկյուններում անհրաժեշտ է նշել «Հավելված 1 Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2020 թվականի ապրիլի 10-ի թիվ 17-Ա որոշման», «Հավելված 2 Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2020 թվականի ապրիլի 10-ի թիվ 17-Ա որոշման», «Հավելված 3 Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2020 թվականի ապրիլի 10-ի թիվ 17-Ա որոշման», «Հավելված 4 Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2020 թվականի ապրիլի 10-ի թիվ 17-Ա որոշման», «Հավելված 5 Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2020 թվականի ապրիլի 10-ի թիվ 17-Ա որոշման» գրառումները:

Թիվ 18-Ն որոշման նախաբանում «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 90-րդ հոդվածի 1-ին, 4-րդ, 6-րդ մասերին և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին, 4-րդ և 5-րդ մասերին հղում կատարելու անհրաժեշտություն չկար, քանի որ համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆինանսական միջոցներ չեն ուղղվել համայնքի բյուջեի ֆոնդային մաս, ինչպես նաև տվյալ փոփոխություններով պահուստային ֆոնդից գումարներ չեն ուղղվել համայնքի բյուջեի չկանխատեսված ծախսերի կամ նախատեսված ծախսերի լրացուցիչ ֆինանսավորմանը:

Կատարող՝ Ն.Մարտիրոսյան
07.05.2020թ.